Նախագիծ 55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

.....2011 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ և 76-րդ հոդվածի 5-րդ մասերի, <Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2–րդ մասի <զ> ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի Լուսաջուր տեղամասի շահագործման ծրագիրը՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված քաղաքացի Արայիկ Մկրտչյանի սեփականությունը հանդիսացող հողերի նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, քանի որ՝

ա. ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն,

բ. ծրագրի իրականացումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների էական աճ,

գ. ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը,

դ. ծրագրի իրականացումը լուրջ խթան է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց նշված սեփականության օբյեկտի օտարման, քանի որ օտարվող սեփականության օբյեկտի տարածքում և /կամ/ դրան անմիջական հարևանությամբ գտնվող տարածքում իրականացվելու են հանքավայրի շահագործման աշխատանքներ:

2.Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված տարածքի ձեռքբերող է հանդիսանում <Պարամաունտ Գոլդ Մայնինգ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,

2) սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարն է,

3) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2012 թվականի հունվարի 1-ն է.

4) սույն որոշմամբ սահմանված ձեռքբերողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են <Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա,

3. Սույն որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի տարածքում՝ 3,22 հա սեփական հողերը համաձայն N1 հավելվածի, փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7-օրյա ժամկետում ապահովել օտարվող սեփականության սեփականատիրոջ և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ստացած գույքային իրավունք ունեցող անձի իրազեկումը,

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ սահմանված բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքի նկատմամբ սույն որոշումից բխող գույքային իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում՝ սույն որոշմամբ սահմանված տարածքը ձեռք բերողի սեփական միջոցների հաշվին,

3) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետերի հանձայն փոխադրված՝ մասնավոր սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության իրավունքով տրամադրել <Պարամաունտ Գոլդ Մայնինգ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

4) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն որոշման 1-ին կետում նշված օտարման գոտում գտնվող հողամասի սեփականատիրոջը սահմանված կարգով տեղեկացնել նշված հողամասը պետության կարիքների համար օտարման գոտի հայտարարելու և նրա հողամասը հետ վերցնելու մասին ու ապահովել օտարման գոտու և դրա նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում,

5) պետության կարիքների համար հետ վերցվող հողամասի գնի հատուցման վերաբերյալ սեփականատիրոջ հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո համապատասխան տեղեկատվությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը,

6) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7-օրյա ժամկետում ապահովել օտարվող սեփականության սեփականատիրոջ և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ստացած գույքային իրավունքներ ունեցող անձի իրազեկումը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցել սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի հանձնարարականի կատարումն ապահովելուն:

6. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետից տեղեկատվությունն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել պետության կարիքների համար հետ վերցվող հողամասի գնի հատուցման ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ առաջարկություն:

7. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետին համապատասխան՝ պետության կարիքների համար հետ վերցվող, ինչպես նաև հանքարդյունահանման համար անհրաժեշտ 3,22 հա հողամասն ընդգրկվում է արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայում:

8. Սույն որոշումից բխող՝ պետական գրանցում պահանջող ձևակերպումները ֆինանսավորվում են <Պարամաունտ Գոլդ Մայնինգ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի վարչական սահմաններում որոշակի տարածքում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

<u>Անհրաժեշտությունը</u> - <Պարամաունտ Գոլդ Մայնինգ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի <Լուսաջուր> տեղամասի շահագործման ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ընդհանուր 3,22 հա մակերեսով հողամասը ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ:

<Պարամաունտ Գոլդ Մայնինգ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հանքավայրի շահագործման նախագծով նախատեսվում է կատարել կապիտալ ներդումներ շուրջ 6.0մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով:

Տարեկան նախատեսվում է արդյունահանել 150 հազ.տ հանքաքար, որի վերամշակման արդյունքում սպասվում է ստանալ մոտ 1100կգ ոսկի, որի դիմաց կվճարվի մոտ 227.7 մլն. դրամի չափով բնօգտագործման վճար, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված հարկեր և տուրքեր: Բացի այդ կապահովի նաև ՀՆԱ-ի աճ:

Հնաքավայրը շահագործվելու է ստորգետնյա եղանակով, ինչը համեմատաբար մեղ ազդեցություն կթողնի շրջակա միջավայրի վրա:

Հանքավայրի շահագործումը կնպաստի նաև ՀՀ Կոտայքի մարզում զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բարձր վարձատրվող շուրջ 300-450 աշխատատեղերի ստեղծմանը և ընթացքում կմեղմացվի ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր և դրան հարակից համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u> – ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2011թ. մարտի 15-ին <Պարամաունտ Գոլդ

Մայնինգ> ՍՊԸ-ին տրվել է լեռնահատկացման ակտ՝ 45,1հա հողատարածքով, սակայն նշված հողատարածքի սահմաններում 3,22հա մակերեսով հողատարածքը սեփականության իրավունքով պատկանում է այլ սեփականատիրոջ, ինչը խոչընդոտում է ընկերության ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարմանը:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը – Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի կարգավորում:

Կարգավորման նպատակը և բնույթը - Նշված հողերի՝ գերակա հանրային շահ ճանաչելը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրի <Լուսաջուր> տեղամասի շահագործման ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն, ծրագրի իրականացումը կապահովի հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի և արտահանման ամրապնդմանը, խթան կհանդիսանա տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք - Իրավական ակտի նախագծումն իրականացվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում:

Ակնկալվող արդյունքը – Նախագծի իրագործման արդյունքում տարածաշրջանում կիրականացվեն ֆինանսական ներդրումներ, կավելանան պետական եկամուտները, կստեղծվեն աշխատատեղեր, տնտեսապես կզարգանա Կոտայքի մարզը: